ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2023- 03.05/
03.05.2023թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Աննա Վարդապետյանին

Հարգելի՛ գլխավոր դատախազ,

27.04.2023թ.-ին մեր կազմակերպության կողմից քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում՝ սույն թվականի ապրիլի 23-ի լույս 24-ին, ժամը 1-ի սահմաններում ՛՛Պոլիգրաֆ՛՛ ակումբի վրա ՀՀ ոստիկանության աշխատակիցների ներխուժման և ակումբի աշխատակիցների ու այցելուների նկատմամբ ցուցաբերած ոչ իրավաչափ գործողությունների, մասնավորապես խոշտանգման, մարդկային արժանապատվության և պատվի նսեմացման, ֆիզիկական ու հոգեբանական բռնության փաստի առթիվ քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ: Միաժամանակ, հաղորդմանը կցվել են ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից հանցանքի կատարման փաստը հաստատող համապատասխան նյութերը՝ վերցված ինչպես համացանցում տարածված հրապարակային լրատվական նյութերից, այնպես էլ տրամադրված «Պոլիգրաֆ» ակումբի աշխատակիցների կողմից՝ հանձին դեպքի ամբողջական տեսագրության:

Որպես լրացում ներկայացված հանցագործության մասին հաղորդմանը, 02.05.2023թ. ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել կից գրություն, նույն գործով նախաձեռնվելիք քրեական վարույթի շրջանակներում մեկ այլ քաղաքացու նույնպես տուժողի կարգավիճակ տալու համար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից վերջինս ենթարկվել է խոշտանգումների և մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, խուզարկության ժամանակ մերկացվել է ոստիկանության բաժանմունքում և ենթարկվել տարբեր տեսակի սպառնալիքների:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ իրավասու մարմինը պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, ***եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում է ստացվել*** ֆիզիկական անձից, իրավաբական անձից և այլն: ***Հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:*** Միաժամանակ, քրեական դատավարության օրենսգիրքը քրեական վարույթ նախաձեռնելու առիթ է համարում նաև

զանգվածային լրատվության միջոցներում առերևույթ հանցանքի մասին հրապարակված տեղեկությունները:

Ամփոփելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքից համապատասխան իրավանորմերի վկայակոչումը, հարկ է նշել, որ օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ 173-րդ հոդվածով նախատեսված աղբյուրից ***առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն,*** իսկ դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, այն վերահասցեագրում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

Այսպիսով, ***հաղորդման ներկայացումից անցել է շուրջ մեկ շաբաթ***, սակայն ՀՀ գլխավոր դատախազությունը օրենքով սահմանված իր պարտավորությունների կատարման փոխարեն՝ հանձին առերևույթ հանցանքի մասին հաղորդման ստացումից հետո ***անհապաղ քրեական վարույթ նախաձեռնելը***, առ այսօր որևէ կերպ չի արձագանքել ներկայացված հանցագործության մասին հաղորդմանը: Հաշվի առվելով այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է կոնվենցիոն և սահմանադրական բացարձակ իրավունք հանդիսացող խոշտանգումներից զերծ մնալու և խոշտանգումների արգելքի սկզբունքի մասսայական խախտմանը ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից, էլ ավելի է ընդգծվում մարդու անօտարելի իրավունքի հրապարակային ոտնահարման նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազության տոտալ անտարբերությունն ու անգործությունը:

Ի թիվս հաղորդման հիման վրա դեռևս քրեական վարույթ չնախաձեռնելու քննադատելի փաստը, դրանով պայմանավորված առ այսօր ՀՀ ոստիկանության բռնի գործողություններից տուժած նշված քաղաքացիները չունեն տուժողի կարգավիճակ, չեն անցել որևէ փորձաքննություն, որը կհանդիսանա պատճառված ֆիզիկական և հոգեբանական բռնության լրացուցիչ հավաստում, ինչը պարզապես անթույլատրելի է ժողովրդավարական արժեքներ որդեգրած Հայաստանի Հանրապետության համար:

Ամփոփելով վերը նշվածը, ***պահանջում եմ առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդման հիման վրա անհապաղ նախաձեռնել քրեական վարույթ և իրականացվելիք օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննությամբ երաշխավորել այն արդարադատությունը, որի պարտավորությունը ՀՀ-ն ստանձնել է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մի շարք իրավական ակտերով:***

Հարգանքով,

Կազմակերպության նախագահ՝ *Արթուր Սաքունց*

Կատարող՝ Ն. Տեր-Մովսիսյան
էլ հասցե՝ ntermovsisyan@hcav.am